

## Անկանխիկ ոսկով մետաղական հաշիվներ

Անկանխիկ ոսկով մետաղական հաշիվը հանդիսանում է բանկային հաշիվ, որը հնարավոր է վարել միայն անկանխիկ ոսկով: Սկսած 2015թ. մայիսի 4-ից դադարեցված է անկանխիկ ոսկով մետաղական հաշիվների բացումը:\*

### Հիմնական սակագներ

- Հաշվի սպասարկման վճարը կհաշվարկվի և կգանձվի ամսվա ընթացքում ՀՀ դրամին համարժեք ոսկով հաշվի միջին օրական մնացորդից՝ ներքոհիշյալ սանդղակի

Անկանխիկ ոսկով հաշվի օրական միջին մնացորդը արտահայտված ՀՀ դրամով	Սպասարկման ամսական վճար
մինչև 6,500,000	0.08%
6,500,001 - 65,000,000	0.04%
ավելի քան 65,000,000	0.01%

Սպասարկման ամսական վճարը գանձվում է անկախ այն փաստից, թե արդյոք հաճախորդը հաշիվն օգտագործում է, թե՛ ոչ:

Բոլոր տեսակի գանձումները կատարվում են ՀՀ դրամով: Սակագներով նախատեսված վճարները որպես կանոն վճարվում/գանձվում են մետաղական հաշվից, ընդ որում՝ Բանկին իրավունք է վերապահվում գանձվելիք գումարի չափով անկանխիկ ոսկին փոխանակել ՀՀ դրամի և գանձել: Անկանխիկ ոսկու փոխանակման գործարքն իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից հայտարարված ոսկու հաշվարկային փոխարժեքով, եթե այլ բան նախատեսված չէ սույն սակագներով:

### Հիմնական առանձնահատկություններ

Մետաղական հաշվից կատարվող գործարքների համար պահանջվող նվազագույն մուտքը կամ հաշվով գործարքի նվազագույն չափը՝ 1 տրոյական ունցիա

1 տրոյական ունցիան հավասար է 31.10348 գրամի

Անկանխիկ ոսկով փոխանցումները հնարավոր է կատարել միայն «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ հաշվետեր հաճախորդների համար:

Սակագինը՝ փոխանցվող գումարի 0.1%<sup>1</sup>

Էյչ-Էս-Բի-Սի Բանկում հաճախորդի հաշիվների միջև փոխանցումները կատարվում են անվճար:

Կարևոր նշում. Անկանխիկ ոսկով մետաղական հաշիվը դա արտարժույթային հաշիվ է, այսինքն XAU փոխարժեքի տատանումը կարող է ունենալ ինչպես դրական այնպես էլ բացասական ազդեցություն մետաղական հաշվին առկա միջոցների վրա՝ արտահատված ՀՀ դրամով:

\*Սկսած 2015թ. մայիսի 4-ից դադարեցված է անկանխիկ ոսկով մետաղական հաշիվների բացումը:

<sup>1</sup> Փոխանակումը իրականացվում է Բանկի կողմից սահմանված անկանխիկ ոսկու գնման փոխարժեքով:

<sup>2</sup> Անկանխիկ ոսկով հաշվի օրական միջին մնացորդը հաշվարկվում է կիրառելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից օրական հայտարարված ոսկու հաշվարկային փոխարժեքը:

Թարմացվել է՝ 17/01/2019 15:00